



«Երիտասարդության ձայնը հանուն զարգացման և փոփոխությունների» հայ-վրացական միջսահմանային ծրագրի շրջանակներում հերթական հանդիպումը տեղի ունեցավ «Համայնքային Համախմբման և Աջակցության կենտրոն» ՀԿ-ի Ալավերդու գրասենյակում: Հանդիպմանը մասնակցեցին ծրագրում ընդգրկված հայաստանյան կողմի ուսանողները: Քննարկվեց դպրոցներում նախատեսվող հանդիպումների գործողությունների պլանը: Մոտակա մեկ շաբաթում ուսանողները պատրաստվում են երկրորդ հանդիպումն անցկացնել դպրոցներում՝ վերլուծության ենթարկելու համար ծրագրի իրենց գաղափարները:

«Երիտասարդության ձայնը հանուն զարգացման և փոփոխությունների» ծրագիրն իրականացվում է Կրաստանի Հանրապետության Մարնեուլիի, Բոլնիսիի և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյանի և Ստեփանավանի տարածաշրջաններում՝ «Մարնեուլիի Ժողովրդավար Կանանց Խորհուրդ» ՀԿ-ի, «Համայնքային Համախմբման և Աջակցության կենտրոն» ՀԿ-ի, «Civitas Georgca» ՀԿ –ի կողմից՝ Եվորպական Միության աջակցությամբ:



